ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

2021թ. հունվարի 11-ին ստորագրված թիվ ՀՀՀ-ԳՀԱՊՁԲ-21/3-5 պայմանագրին լրացում կատարելու մասին

Ք. Երևան 07 հունիսի 2021թ.

«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ նաև՝ Գնորդ), ի դեմս գործադիր տնօրեն Հ. Մովսիսյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա մի կողմից, և

«Սոֆթ Թրեյդ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ նաև՝ Վաճառող), ի դեմս տնօրեն Ա. Սարգսյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից

Հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 437-րդ հոդվածի և 466-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները, ինչպես նաև Կողմերի միջև 2021թ. հունվարի 11-ին ստորագրված թիվ ՀՀՀ-ԳՀԱՊՁԲ-21/3-5 պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.5 կետի պահանջները, ստորագրեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

<u>Կողմերը հանձայնեցին.</u>

1. Կատարողը պարտավորվում է Գնորդին լրացուցիչ մատակարարել սույն Համաձայնագրի Հավելված 1-ով սահմանված ապրանքը (այսուհետ նաև՝ Ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել Ապրանքը և վճարել դրա համար:
2. Սույն Համաձայնագրով նախատեսված Ապրանքի գինը կազմում է 71 067 (յոթանասունմեկ հազար վաթսունյոթ) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն, համաձայն Հավելված 1-ով սահմանված նախահաշվի: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:
3. Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ 30 աշխատանքային օրվա ընթացքում:
4. Սույն Համաձայնագրով նախատեսված Ապրանքը Վաճառողի կողմից մատակարարվում են Գնորդին մինչև 2021 թվականի հունիսի 15-ը ներառյալ:
5. Պայմանագրի ցանկացած դրույթ կիրառելի է սույն Համաձայնագրի նկատմամբ այնքանով, որքանով այլ բան նախատեսված չէ սույն Համաձայնագրով:
6. Պայմանագրի մնացած դրույթները մնում են անփոփոխ:

7. Համաձայնագրի Հավելված 1-ը հանդիսանում է սույն Համաձայնագրի անբաժանելի մասը:
8. Սույն Համաձայնագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:
9. Սույն Համաձայնագիրը ստորագրված է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր Կողմին տրվում է Համաձայնագրի մեկական օրինակ:

«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Գ. Հովսեփյան 26, Նորք 0047
ՀՎՀՀ՝ 01540062
«Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 2470102796740000

Հ. Մովսիսյան
Գործադիր տնօրեն

«Սոֆթ Թրեյդ» ՍՊԸ

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Շերամի 90/6

ՀՎՀՀ՝ 01263355
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 11500430700107

Ա. Սարգսյան
Տնօրեն

Հավելված 1
2021 թվականի հունիսի 07-ին ստորագրված թիվ ՀՀՀ-ԳՀԱՊՁԲ-21/3-5 պայմանագրին լրացում կատարելու մասին Համաձայնագրի

ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ, ՔԱՆԱԿԸ ԵՎ ԱՐԺԵՔԸ

Անվանում	Բնութագիր	Չ/Մ	Քանակ	Միավորի արժեք	Ընդհանուր գին
Թուղթ զուգարանի*/1/	Եռաշերտ, սպիտակ գույնի, պատրաստված ցելյուլոզայից «Silk Soft» տիպի, կամ համարժեքը, 3 շերտ:	հատ	600	106,97	64 182
Անձեռոցիկ*/1/	Անձեռոցիկ սեղանի՝ երկշերտ, փափուկ թղթից, թղթի 1 մ2 մակերեսի զանգվածը՝ 20 գ, խոնավությունը՝ 7,0 %, 100 հատանոց տուփերով, քաշովի:	հատ	75	91,8	6 885

«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Գ. Հովսեփյան 26, Նորք 0047
ՀՎՀՀ՝ 01540062
«Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 2470102796740000

Հ. Մովսիսյան
Գործադիր տնօրեն

«Սոֆթ Թրեյդ» ՍՊԸ
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Շերամի 90/6

ՀՎՀՀ՝ 01263355
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 11500430700107

Ա. Սարգսյան
Տնօրեն